ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«30» 01 2023 թ.
No 000881

«ԵՐԵՎԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ»» ԲԱԺ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՖԻԱՄԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
(հասցե՝ Թբիլիսյան խճ.20,
պատճենը՝ ՀՀ, ք. Երևան, Հ.Հովհաննիսյան փ., տ. 19,
էլ.փոստի հասցե՝ armchampagne@rambler.ru)

Հարգելի՛ տիկին Հակոբյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 27-ի ««Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Միեր Հայկի Տերտերյանին թիվ ՀԳ-03551/22 վարույթով շահագրգիռ անձ ճանաչելու մասին» թիվ 40-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Մարիամ Նիկոյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (214)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 6 ապրիլի 2023 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2023 թվականի թիվ 40-Ա

«ՏԵՐՏԵՐՅԱՆՆԵՐԻ ԱՅԳԻՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՄՀԵՐ ՀԱՅԿԻ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ԹԻՎ ՀԳ-03551/22 ՎԱՐՈՒՅԹՈՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի հունվարի 27-ի նիստում, քննարկելով «Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Մհեր Հայկի Տերտերյանին թիվ ՀԳ-03551/22 վարույթով (այսուհետ նաև՝ **Վարույթ**) շահագրգիռ անձ ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 27-ի ««Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Երևանի «Շամպայն Գինիների Գործարան»» բաց բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 475-Ա որոշմամբ հարուցել է Վարույթը:

«Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և ֆիզիկական անձ Մհեր Հայկի Տերտերյանը 2023 թվականի հունվարի 24-ին Հանձնաժողով են ներկայացրել իրենց շահագրգիռ անձ ճանաչելու վերաբերյալ միջնորդություն (այսուհետ նաև՝ **Միջնորդություն**) այն հիմնավորմամբ, որ «Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Երևանի «Շամպայն Գինիների Գործարան» բաց բաժնետիրական ընկերության կողմից թույլ տրված իրավախախտման հետևանքով անմիջականորեն խախտվել են «Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Մհեր Հայկի Տերտերյանի իրավունքները:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 74-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շահագրգիռ է այն անձը, որի

իրավունքներն իրավախախտման հետևանքով անմիջականորեն խախտվել են: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձը շահագրգիռ է ճանաչվում իր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի ընդունած՝ նրան շահագրգիռ անձ ճանաչելու մասին որոշմամբ:

Սույն գործով վարույթը հարուցվել է «Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Երևանի «Շամպայն Գինիների Գործարան» բաց բաժնետիրական ընկերության կողմից «MERO'N» բառի և կաթիլի տեսքով պատկերի ներառմամբ ապրանքային նշանի, ինչպես նաև «LA'MERO'N»/«ԼԱ'ՄԵՌՈՆ» բառի և կաթիլի տեսքով պատկերի ներառմամբ ապրանքային նշանի օգտագործման միջոցով «Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, նրա գործունեության և առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով: Միաժամանակ, գործի փաստերի համաձայն՝ «MEYRON» համակցված ապրանքային նշանի (ապրանքային նշանի գրանցման վկայագիր թիվ 26910) իրավատերը Մհեր Հայկի Տերտերյանն է, իսկ «Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը լիցենզային պայմանագրի հիման վրա (լիցենզային պայմանագրի գրանցման համար թիվ 2716, գրանցման ամսաթիվը՝ 2022 թվականի հունվարի 10) տրվել է «MEYRON» համակցված ապրանքային նշանի օգտագործման իրավունք:

Հետևաբար, Վարույթի շրջանակներում քննարկվող իրավախախտմամբ կարող են անմիջականորեն շոշափվել «Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Մհեր Հայկի Տերտերյանի իրավունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Մհեր Հայկի Տերտերյանին ճանաչել թիվ ՀԳ-03551/22 վարույթով շահագրգիռ անձ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2023 թ. հունվարի 27
Երևան